

մէջ, պարտաւոր են, ոչ թէ տղայի նման լալ պառաւի նման անիծանել և ստրկաբար աղաղակել թէ Վիւրսեբը այսպէս կ'ընեն, այնպէս կ'ընեն, մենք չենք կարող դիմանալ, մենք պիտի գաղթենք, և այլն այլ պարտական են իրենց լըծել և ընտանեկան սրբութեան համար, իրենց մարդկային կոչման և արժանաւորութեան համար՝ պաշտպանողական սովոր նախապատիւ համարել ստրկական վատաստութեանն, արիւնքի նախանձախնդրութիւնը՝ արդայական լաց ու կոծէն և պատուաւոր մահը՝ անպատիւ կեանքէն։ Այս կը պատուիրեն օրէնք և մարդկութիւն, այս կը պահանջեն իրաւունք և պարտք։

Ով ականջ ունի, թող լսէ, ով սիրտ ունի, թող զգայ։

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՍՏԱՆՈՅ

(Երբեմնակութիւն, տես թիւ 8)։

Հայրս յարմար առիթ համարելով անոր Լուսինի Տաճարը տուաւ, իրեն զբաւանաց ժամերուն մէջ կարգաւ լու։ Այս զանոնք տեսնելով և առանց ոչ մի բացատրութեան կարօտութիւն ունենալու հասնալով սկսաւ ինքն ու յօրինել, և այնքան յառաջացաւ, որ միշտ ներկայ կը գտնուէր այն շաբաթական ժողովներուն, ուր փարիզի բոլոր հանձարեղ անձինքը կը ժողովէին իրենց երկասիրութիւնները բերելու՝ կամ ուրիշները քննելու համար։ Եղբայրս այս ժողովոց մէջ նշառաւոր էր թէ քննութեան և թէ իրեն արդեանց համար, որովհետեւ ինքը

չարունակ նորանոր բաներ կամ իրողութիւններ բերողներէն մէկն էր։ Այս կաճառաց կամ ժողովոց մէջ Խաւրիայէն, Վերմանիայէն և ուրիշ օտար երկիրներէն զրկած խնդիրներ կային որոյ իւրաքանչիւրին վրայ եղբայրս իրեն կարծիքը յայտնեց, այնքան ճշգուծեամբ որ ուրիշներէն մէկը չէր կարողացած, քանզի այնպիսի կենդանի լոյս մը ունէր անիկա, որ պատահեցաւ երբեմն ուրիշներէն չը նշմարուած սխալները ինքը տեսաւ և դարգէց։ Սակայն այս բոլոր ուսմանց մէջ երկրաչափութեան՝ միմիայն իրեն զբօսանաց ժամանակ կը պարապէր, վստի զի լատինական լեզուն կանոններու վրայ կը սովորէր, զոր Հայրս առանձինն յօրինած էր։ Այս որովհետեւ այս գիտութեան մէջ, իրեն այնքան եռանդեամբ փնտռած ճշմարտութիւնը կը գտնէր, ուստի ասոր վրայ այնպիսի գոհ գտնուեցող, որ բոլոր իւր մտադրութիւնը դարձուց անոր վրայ, և այնպէս յառաջողիմութիւններ գրաւ անոր մէջ քիչ ժամանակէն, որ իւր տասն ու վեց տարին խոյսեցնելու վրայ ճառ մը գրեց, և այս մտքի այնպիսի մեծ ճիգ մը համարուեցաւ, որ ամեն մարդ կրէր թէ Երբեմնութեան երկրաչափէն ի վեր երբեք այսպիսի կատարեալ գործ մը չը տեսնուեցաւ, և իմաստուն անձինքը կը խորհէին զանոնք տպելու, զի նոքա կ'ըսէին որ այն երկը միշտ զարմանալի պիտի ըլլայ, և նաեւ եթէ տպուէր որ այն ժամանակի մէջ ասիկա հնարողը տասն ու վեց տարեկան հասակին մէջէր, աւելի այս պարագայս պիտի յաւելնէր աւելորդ արժանաւորութիւնը, բայց որովհետեւ եղբայրս՝ փառասիրութեան և համբաւոյ տենչը իր մէջ չունենալով՝ արժէք չը տուաւ անոր շատ և այսպէս այս երկը չը տպուեցաւ։

Այս ժամանակներու մէջ եղբայրս՝
լատիներէն և յունարէն կ'ուսանէր
և բայ 'ի յայտմանէ, ճաշի՝ ժամանակ
և ճաշէն վերջը, հայրս երբեմն տրաւ
մաքանութեան և երբեմն բնագիտու-
թեան և փիլիսոփայութեան ուրիշ
մասանց վրայ կը խօսէր անոր, և այս
է իրեն բոլոր ուսածները, առանց
վարժապետն մը երթալու, և անոնց
համար հօրմէս զատ ուրիշ վարժապետ
չունեցաւ, նոյնպէս և յետոյ սովո-
րածներուն համար։ Հայրս՝ անոր այս-
պէս ամեն գիտութեանց մէջ ըրած
յառաջադիմութեանց վրայ շատ կ'ու-
րախանար, բայց չընձմարեց որ այն մեծ
և շարունակեալ զբաղումները այսպի-
սի մի փափուկ հասակի մէջ անոր ա-
ռողջութեանը կարող էին շատ վնա-
սել, և յիրաւի տասն և ութը տարե-
կան էր սկսաւ նա տկարանալ։ Իսկ
հիւանդութիւնը զոր նա կը դատար,
այն ատեն այնքան զորաւոր չըլլալով,
չկրցաւ զայն իւր սովորական զբաղում-
ներէն արգիլել։ այնպէս որ նա իւր
տասնութ ինը տարեկան հասակին մէջն
էր երբ հնարեց թուաբանական գոր-
ծին, որով ոչ թէ միայն առանց գրչի և
առանց հաշուի գործիքներու կը կարու-
ղանայ մարդ կատարել հաշուոյ ամեն
տեսակները, այլ և առանց թուաբա-
նութեան ոչ մի կանոնը գիտնալու,
մարդ կրնայ ընել բոլորը անվրէպ ճշ-
գութեամբ։

Այս գործը բնութեան մէջ իբրեւ
մէկ նոր բան համարուեցաւ, վասն զի
մեքենայի վերածեց գիտութիւն մը որ
մտքի մէջ կը գահակալէ, այնպիսի ըս-
տուգութեամբ մը բոլոր համարողա-
կան գործողութիւնները ընելու միջոցը
գտնելով, առանց խորհելու կարօտու-
թիւն մը ունենալու։ Այս աշխատու-
թիւնը՝ զինքը շատ հոգնեցուց ոչ
թէ մտածման և կամ շարժման համար

զոր առանց դժուարութեան գտաւ,
այլ այս բոլոր բաները (զանոնք) գոր-
ծաւորաց հասկըցնելու համար։ Այս-
պէս զի երկու տարուան մէջ հազիւ
այն կատարելութիւնը ստացաւ, ուր
է հիմա։

Իսկ այս հոգնութիւնն ու տկա-
րութիւնը, զորս ինքը քանի մը տար-
ու ընէ 'ի վեր ունէր, զինքը հիւան-
դութեան մէջ ձգեցին, այնպէս որ
շատ անգամ մեզ կ'ըսէր թէ՝ տասն ու
ութը տարեկան հասակէս ասդին օր մը
առանց ցաւի երբեք անցուցած չունիմ։

Այսու ամենայնիւ այս ցաւերը
շարունակ միօրինակ սաստկութեամբ
չըլլալով, երբ մէկ քիչ կը հանդարտե-
ին, իսկոյն նորա միտքն կը սկսէր նոր
բան մը որոնելու։ Ինչպէս երբ տար-
ուան շրջանը մտնելով, և խորիչէլին
փորձերը տեսնելով, և ինքն ալ յետոյ
ուրիշ փորձեր հնարեց, զոր իրեն փո-
շառութիւնները կ'անուանեն, որ
պարզապէս կ'ապացուցանէր թէ այն
բոլոր ազդեցութիւնները, զոր մարդիկ
մինչեւ այս ժամանակ դատարկութե-
ն կը տային, օդին ծանրութենէն յառաջ
կը գան։ Կարգկային գիտութեանց
մէջ իրեն միտքը հոգնեցնող վերջին ըզ-
բաղումը այս եղաւ, և թէպէտ յե-
տոյ ակադ հնարեց, սակայն ասիկայ
առանց ջանադրութեան և առանց մը-
տածելու գտնելուն համար, (ինչպէս
տեղը պիտի ըսենք,) մեր խօսքին չը հա-
կառակիր։ Այս փորձառութենէն ան-
միջապէս յետոյ, երբ տակաւին քսան
չորս տարեկան հասակին չէր մտած,
Այսուամայն յախախտմանութիւնը
այնպէս կամեցաւ որ նա բարեպաշ-
տական գրուածքներ կարդալով, իւր
միտքը լուսաւորէ, և ասով իմացա-
եղեայր թէ քրիստոնէական կրօնը
կըստիպէ զմարդ միայն Աստուծոյ հա-
մար ապրիլ և ուրիշ առարկայ մը չու-

Նենալ բայ ի անկէ, և այս ճշմարտութիւնը իրեն այնքան յայտնի օգտակար և հարկաւոր երեւցաւ, որ իւր բոլոր խաղարկութիւններն ու հետամուտութիւնները վերջացնելով, և բոլոր ուրիշ գիտութիւններէն հրաժարելով մի միայն այն մէկ բանին ըզբաղել որոշեց, զոր Յիսուս Վրիտառ կ'անուանէր Ռոյն խոր (1), այն է ասու ուսման այն ճշմարտութեանց և պատուաւորանաց նուիրել իր կենանքը:

Լստուածոյ մէկ մասնաւոր պաշտպանութեամբը նա իր երիտասարդութեան ամեն տեսակ մոլութիւններէն ազատ էր մինչեւ այն ատեն, և մանաւանդ աւելի հեռի գտնուեցաւ այնպիսի մոլութիւններէ, որ կրօնքի կը նայէին իրեն հետաքրքրութիւնները բնական բաներու մէջ սահմանափակելով: Շատ անգամ ինձ կ'ըսէր՝ որ այս երախտիքը ուրիշներու հետ հօրս կը պարտիմ: Փանգը ինքը դէպ ի կրօնքը շատ անհաճութիւն ցուցնելով մանկութենէ ներշնչած էր անկէ եղբորս ալ ուսուցանելով անոր թէ ինչ որ հաւատոյ կը վերաբերի՝ անոր հնազանդէն զատ անօգուտ է պատշառ որոնել:

Լսն օրինակները՝ զորս շարունակ մէկ հօրէ մը կ'ընդունէր, այս հօրէն, զոր կը սիրէր և կը պատուէր ի բոլոր սրտէ, խորին ապաւորութիւն կ'ընէր իրեն մտաց: Լսնպէս որ ըսելով ինչ ինչ մոլութիւններ կրօնական վարդապետութեան մասին, երբէք և ոչ մի կերպով վրդավեցաւ իրեն հաստատամտութիւնը, թէպէտ և ինքը տակաւին երիտասարդ էր. այլ նա որ ամեն բանի պատշառ կը փնտռէր ի

րեն հետաքրքրութեամբ լի և այսպէս ընդարձակ և մեծ հանձնարով, այլ մի բըր մանուկ մը կը հնազանդէր այն ամեն իրողութեանց, որք կրօնքի կը վերաբերին, մոլորական համարելով այն անձինքը, որոնք այս գլխաւոր սխալման մէջ ընկած էին, թէ մարդկային բանաւ կանուութիւնը ամեն բանէ վեր է և որոնք չէին ուզէր ճանաչել հաւատոյ սահմանը: Եւ այս իրեն պարզամտութիւն անոր մէջ ցոյց տալու համարեց, մինչեւ անգամ այն օրէն՝ երբ նա որոշեց ձգել ուրիշ ամեն ուսմանը քննելը և կրօնականին հետեւիլ, չը զբաղեցաւ նոյն Լստուածաբանութեան հետաքրքրական հարցմանց մէջ. այլ իրեն մտաց բոլոր զօրութիւնը դարձոյց բրիտանական բարոյականութիւնը ուսանելու և գործ դնելու, որուն և բարոյական նուիրեց իրեն բոլոր տաղանդներն ու ձիրքերը, զորս Լստուած պարգեւած էր. որն որ իրեն կենաց մնացորդին մէջ ուրիշ բան չըտաւ բացի ի գիշեր ցորեկ Լստուածոյ օրէնաց վրայ խորհելէն:

Թէպէտ դպրոցական աստուածաբանութեան մասնաւոր ուսում մը չուսաւ, սակայն և այնպէս նա եկեղեցւոյ վճիռները գիտէր, որոնք ընդհեմ հեքստիկոսութեան նուրբ ճարտարմտութեամբ հնարուած էին և Լստուած այն ժամանակէն տուաւ առիթ անոր որ երեւցնէ ամենուն իւր նախանձախնդրութիւնը զոր ունէր առ կրօնք:

(Պատի շարունակութիւն):

(1) Մարթա, Մարթա. դու հոգատ և բաւ դու՛ իւրիք զբաղեալ ես, բայց աստ ակա ինչ դիպոյ է: Մարթամ մասն բարի ընտելաց, զոր ոչ բաւեցի ի նմանէ ք: Ղաւկ. Ժ. 41: